# Անդրկովկասում տարածքային յաւակնութիւնների եւ ազգամիջեան հնարաւոր բախումների քարտէզը

ՎԻՏԱԼԻ ԽԱԼԱԹԵԱՆ

Տարածքային յաւակնութիւնների եւ ազգամիջեան բախումների քարտէզների կազմումը արդիական է բազմազգ պետութիւնների եւ շրջանների համար։ Նման քարտէզներ կազմելիս, սովորաբար, օգտագործւում են բազմաթիւ քարտէզագրական, պատմական եւ աշխարհագրական աշխատանքներ։ Այս քարտէզը կազմելու տեսանկիւնից կարեւոր ենք համարում յատկապէս նշել Ռ. Յովհաննիսեանի կողմից կազմուած «Կովկասի տարածքային վէճերի» քարտէզը (**Hovannisian R. G., The Republic of Armenia. Vol. 1,The First Year, 1918-1919.- Berkley-Los-Angeles-London: University of California Press, 1971, p.290**) եւ «Մոսկովսկիյէ Նովոստի» շաբաթաթերթում տպագրուած «Սամայա պոլիտիչեսկայա կարտա ՍՍՍՌ» - 1991թ., Մարտի 17, յօդուածը։

Մեր կողմից կազմուած քարտէզի վրայ արտայայտուած են.

**I. Այն տարածքները, որոնց պետական կարգավիճակը կարող է փոխուել։**

Այդ տարածքներն են.

1. Աբխազիան։ Այն կարող է Վրաստանի կազմից դուրս գալ,
2. Հարաւ-Օսեթական ինքնավար մարզը (մարզը կարող է վերացուել կամ Վրաստանի կազմում դառնալ Հարաւ-Օսեթական ժողովրդավարական հանրապետութիւն։ Հնարաւոր է նաեւ, որ Վրաստանի կազմից դուրս գայ, հնարաւոր է Հարաւային եւ Հիւսիսային Օսեթիաների միաւորումը),
3. Աջարիան (ինքնավար հանրապետութիւնը կարող է վերացուել կամ միացուել Թուրքիային)։

**II. Հայկական պահանջատիրութեան տարածքները.**

4. Ջաւախքը
5. Նախկին Բորչալուի գաւառի մի մասը կամ Հիւսիսային Լոռին (Դմանիսի, Ծալկայի, Բողնիսի եւ մասամբ Մառնէուլի վարչական շրջանները)
6. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄը)
7. Լեռնային Ղարաբաղի մնացած մասը
8. Գարդմանը (Խանլարի, Շամխորի, Գեդաբեկի վարչական շրջանների լեռնային հատուածները)
9. Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւնը

**III. Տարբեր հանրապետութիւնների միջեւ վիճելի տարածքները.**

10. Ադրբեջանի եւ Դաղստանի միջեւ
11. Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ
12. Ադրբեջանի, Վրաստանի եւ Դաղստանի միջեւ

**IV. Հաւանական ազգամիջեան բախումների շրջանները.**

13. Վրացիների եւ օսերի միջեւ
14. Վրացիների եւ ադրբեջանցիների միջեւ
15. Վրացիների եւ հայերի միջեւ
16. Վրացիների եւ քիստերի (չեչէնների) միջեւ
17. Ադրբեջանցիների եւ լեզգիների միջեւ
18. Ադրբեջանցիների եւ ծախուրների միջեւ
19. Ադրբեջանցիների եւ աւարների միջեւ
20. Ադրբեջանցիների եւ քրդերի միջեւ
21. Ադրբեջանցիների եւ թալիշների միջեւ
22. Ադրբեջանցիների եւ հայերի միջեւ



**V. Սահմանները**

23. Պետական
24. Միութենական հանրապետութիւնների
25. Ինքնավար հանրապետութիւնների եւ մարզերի
26. Առանձին պատմաաշխարհագրական շրջանների եւ վիճելի տարածքների